

ՀԱՆՈՒՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ-2026

Հանուն Ազատ,
Ժողովրդավարական,
Ինքնիշխան,
Եվրոպական Հայաստանի,
Հանուն Հանրապետության

Հայաստանի Հանրապետությունը՝ Անկախության 35-ամյակին ընդառաջ, անցնելով բազմաթիվ ծանր փորձություններով՝ 2020-2023 թթ. պատերազմներով եւ արցախահայության բռնագաղթով, կրկին կանգնած է պատմական շեմին՝ հիշեցնելով հայ ժողովրդի դարավոր պայքարի ոգին, որը միշտ վերածնվել է մոխիրներից: Այսօր, հենվելով մեր նախնիների անկոտրում կամքի եւ հանուն Ազատության եւ Անկախության նահատակվածների մեծագույն սիրանքի վրա, մենք ստացել ենք բացառիկ պատմական հնարավորություն՝ առաջիկա հարյուրամյակում ընթանալու խաղաղ, քաղաքակիրթ եւ ինքնիշխան զարգացման ուղով՝ կերտելով Ազատ, Ժողովրդավարական եւ Եվրոպական Հայաստան, որտեղ յուրաքանչյուր քաղաքացի՝ իր երկրի ճակատագրի կերտողն է եւ տերը: Այս հնարավորությունը պետությանն ու ժողովրդին է, եւ չի՛ կարող կախված լինել մեկ քաղաքական ուժից, մեկ առաջնորդից կամ մեկ հերթական կամ արտահերթ ընտրությունից:

«Հանուն Հանրապետության» կուսակցությունը, լինելով աջ լիբերալ (ազատական) կուսակցություն՝ հավատարիմ անհատական ազատություններին, ազատ շուկային, օրենքի գերակայությանը եւ պետական կարգավորիչ միջամտությանը տնտեսության մեջ, միաժամանակ ապահովելով սոցիալական աջակցություններ դրա կարիքն ունեցողներին՝ իր հանձնառությունն է համարում քաղաքացիների կողմից տրված մանդատի շրջանակում պատասխանատվություն ստանձնել այս պատմական հնարավորությունն իրականություն դարձնելու գործում:

Մենք խնդիր ենք դնում դառնալ ազատ ժողովուրդների ընկերակցության լիիրավ անդամ, ներդաշնակեցնել հարաբերությունները հարեւանների հետ՝ հիմնված փոխադարձ հարգանքի եւ միջազգայնորեն ճանաչված սահմաններում տարածքային ամբողջականության ճանաչման վրա, ինտեգրվել Եվրոպական Միությանը որպես լիիրավ անդամ, ինստիտուցիոնալապես միանալ Եվրաստրատյան եւ Եվրոպական անվտանգային համակարգերին՝ ներառյալ ՆԱՏՕ-ի հետ գործընկերային եւ անդամակցության հեռանկարները, ամենաակտիվ կերպով մասնակցել ԵՄ-ի նորաստեղծ եւ ձեւավորվող անվտանգային ու պաշտպանական կառույցների աշխատանքներին, դաշնակցել առաջատար ժողովրդավարությունների հետ՝ դիմակայելու ներկա եւ ապագա արտաքին ու ներքին սպառնալիքներին, ապահովելով քաղաքացիներին լավագույն պայմանները՝ դրսևորելու իրենց տաղանդներն ու ներուժը հասարակական, քաղաքական, տնտեսական բոլոր ոլորտներում եւ տեխնոլոգիական առաջընթացի բոլոր ուղղություններում՝ որպես գլոբալ թվային եւ տեխնոլոգիական անցման ակտիվ մասնակիցներ եւ շահառուներ:

Ապավինելով ՀՀ քաղաքացիների հավաքական ներուժին, կամքին եւ քաղաքական գիտակցությանը՝ համոզված ենք, որ այս ճանապարհն անցնելը միանգամայն իրատեսական է՝ ինտելեկտուալ եւ կազմակերպչական պոտենցիալով անհատներից կազմված թիմի, կենսունակ ծրագրի եւ վճռական քաղաքական կամքի իրագործման արդյունքում:

ՄԵՆՔ ՀԱՆՁՆԱԹՈՒ ԵՆՔ ԱՊԱՀՈՎԵԼ

1. Ինքնիշխան, ժողովրդավար, անվտանգ եւ արդիական Հայաստան;
2. Ազգային շահի վրա խարսխված արտաքին քաղաքականություն;
3. Արժանապատիվ խաղաղություն, քաղաքակիրթ, փոխշահավետ, հորիզոնական հարաբերություններ հարեւանների հետ;
4. Պաշտպանություն եւ բանակի արդիականացում, անվտանգության ոլորտ, անվտանգության եւ հատուկ ծառայությունների բարեփոխումներ, Համապարփակ պաշտպանության եւ անվտանգության համակարգի ներդրում;
5. Օրինականության եւ իրավունքի գերակայության հաստատում եւ դատաիրավական համակարգի բարեփոխումներ;
6. Աշխարհիկ պետություն, ազատ եկեղեցի, խղճի ազատություն եւ ազգային պատասխանատվություն;
7. Չրո հանդուրժողականություն եւ անզիջում պայքար կոռուպցիայի, հանցավորության, քրեական ենթամշակույթի դեմ;
8. Մրցունակ տնտեսություն. տնտեսական քաղաքականության առաջնահերթություններ;
9. Համաչափ տարածքային զարգացում, ուժեղ համայնքներ եւ արդյունավետ տեղական ինքնակառավարում;
10. Ապահով մարդ եւ ընտանիք, հեռանկարով երիտասարդություն եւ սոցիալապես համերաշխ Հայաստան. մրցունակ Քաղաքացի՝ մրցունակ Պետություն;
11. Առողջ մարդ՝ ուժեղ հասարակություն եւ անվտանգ պետություն;
12. Արդիական եւ տեխնոլոգիապես հագեցած գյուղատնտեսություն;
13. Առաջանցիկ գիտություն՝ հանուն ինքնիշխանության, բարօրության եւ զարգացման;

14. Որակյալ եւ մատչելի հանրակրթություն՝ որպես ազգային անվտանգության երաշխիք;

15. Հայաստանն առաջ տանող ու արժանապատիվ ներկայացնող մշակույթ եւ արվեստ:

Ինքնիշխան, ժողովրդավար, անվտանգ եւ արդիական Հայաստան

Հայաստանի Հանրապետությունը պետք է դառնա ինքնիշխան, ժողովրդավարական եւ արդիական պետություն, որտեղ իշխանությունը ծառայում է ժողովրդին, իսկ պետական ինստիտուտները երաշխավորում են քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները, ինչը երաշխավորվելու է նոր Սահմանադրության ընդունմամբ: Հաշվի առնելով 2020-2023 թթ. ծանր փորձությունները (ներառյալ Արցախի կորուստը եւ արցախահայերի բռնի տեղահանումը), մենք հանձնառու ենք ամրապնդել ինքնիշխանությունը՝ դիվերսիֆիկացնելով արտաքին կախվածությունները եւ կառուցելով եվրոպական ստանդարտներին համապատասխան ժողովրդավարական համակարգ՝ օրենքի գերակայությամբ եւ ժողովրդավարության անշրջելիության ինստիտուցիոնալ երաշխիքներով: Մեր ներքին եւ արտաքին քաղաքականությունները պետք է լինեն փոխկապակցված՝ հիմնված ազգային շահերի վրա:

1. Հայաստանի ներկայիս արտաքին ու ներքին մարտահրավերներին դիմակայելու եւ առկա խնդիրների լուծումները մեր ներսում են՝ գրավականը առաջին հերթին ազատ, իր բոլոր իրավունքներն ու ազատությունները լիովին իրացնող, ազատ ընտրությունների միջոցով իր իշխանությունները ձեւավորող, նրան վստահող ու սատարող քաղաքացուց մինչեւ ինքնիշխան քաղաքականություններ վարելու պետության անխոչընդոտ իրավունքը: Մենք կխրախուսենք քաղաքացիական մասնակցությունը՝ ներդնելով էլեկտրոնային հանրաքվեների եւ տեղական ինքնակառավարման ամրապնդման մեխանիզմներ, հատուկ ուշադրություն դարձնելով Արցախից տեղահանվածների ինտեգրացիային որպես ազգային միասնության երաշխիք:

2. Ազատության ու անկախության հայ ժողովրդի բազմադարյա գերագույն իդոլ, աշխարհագրական ու քաղաքակրթական պատկանելությամբ պայմանավորված՝ Հայաստանի տեղը համաեվրոպական ընտանիքն է, իսկ պետականության մոդելը՝ հայկական ինքնությամբ այնպիսի հզոր եւ հաշվետու պետությունը, որտեղ մարդու կյանքը, աշխատանքը եւ ծերությունը արժանապատիվ ու բարեկեցիկ է, ընտրությունը, ազատությունները եւ իրավունքները հարգվում են, որտեղ ամեն ինչ արվում է հանուն մարդու եւ նրա ապահովության: Մենք կշարունակենք ԵՄ-ի հետ ինտեգրացիան՝ արագացնելով վիզայի ազատականացման եւ բուն անդամակցության գործընթացը, ինչպես նաեւ կմասնակցենք Եվրոպական քաղաքական համայնքի 2026-ի երեւանյան զագաթնաժողովին ձեռք բերված պայմանավորվածությունների իրագործմանը:

3. Հայաստանը առաջին հերթին պետք է ապավինի իր ուժին եւ մրցունակությանը, որի հիմքը առաջանցիկ ու գիտելիքահեն ռազմական, պաշտպանական, տնտեսական, քաղաքական ու հասարակական համակարգերն են: Արտաքին եւ ներքին քաղաքականությունները պետք է լինեն փոխկապակցված ու պայմանավորեն մեկը մյուսին, հանդիսանան միմյանց շարունակությունն ու լրացումը: Մենք կներդնենք թվային կառավարման համակարգ (e-governance)՝ պետական ծառայությունների թվայնացմամբ, կխթանենք IT-ոլորտը հարկային

արտոնություններով եւ կապահովենք կիրերանվտանգությունը ԵՄ ստանդարտներին համապատասխան:

4. Հայաստանի ինքնիշխանության ներքաղաքական խոչընդոտները կարող են վերանայ, երբ Հայաստանի իշխանությունները օրինակարգ են, վայելում են ժողովրդի աջակցությունն ու չեն վախենում ներքին ժողովրդավարական գործընթացներից, երբ իշխանության բոլոր ճյուղերում կառավարող վերնախավը անխոցելի է ցանկացած տեսակի շանտաժի ու կոմպրոմատի հանդեպ: Մենք կշարունակենք ժողովրդավարության խորացումը՝ իշխանության ճյուղերի հավասարակշռմամբ, վեթինգի կատարելագործմամբ եւ քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությամբ, քննության ենթարկելով եւ գնահատականներ ձեւակերպելով մեր նորագույն պատմության բոլոր ժամանակաշրջաններին, հիմքում ունենալով նաեւ միջազգային դատական ատյանների որոշումները, մասնավորապես՝ ՄԻԵԴ-ի 18.09.2025-ի դատավճիռը, կապված 2008-ի մարտի 1-ի ողբերգության հետ:

5. Օտարերկրյա հատուկ ծառայությունների հետ նախկինում համագործակցած անձանց գաղտնագերծումը (յուստրացիա) հրամայական է՝ երկրի անվտանգության ու պաշտպանության, տնտեսության եւ էներգետիկայի, արտաքին ու ներքին քաղաքականությունների կարելուորագույն հարցերով ընդունվող որոշումների վրա արտաքին ազդեցություններն ու ճնշումները, ժողովրդավարության եւ ազատությունների դեմ հնարավոր ոտնձգությունները չեզոքացնելու եւ ի սպառ բացառելու նպատակով: Մենք կներդնենք յուստրացիայի մեխանիզմներ՝ համապատասխանեցնելով եվրոպական փորձաքննությանը եւ լավագույն պրակտիկաներին:

6. Երկրի ինքնիշխանության տնտեսական խոչընդոտները կարող են վերանայ, երբ պետությունը պարենային, էներգետիկ, սոցիալական ու այլ անվտանգությունների առումով ունի ինքնաբավության նվազագույն՝ բազային մակարդակ, այդ բնագավառներում ինքնիշխան նպատակներ հետապնդելու կամք եւ վճռականություն, իսկ քաղաքացին էլ սպրում է բարեկեցիկ կյանքով, այլ ոչ թե անգոր ու անպաշտպան է կենսական հանրային ծառայություններ (զազամատակարարում, էլեկտրամատակարարում, տրանսպորտային փոխադրումներ եւ այլն) մատուցող օտարերկրյա ընկերությունների կամայական «սակագնային» շանտաժներին, մենաշնորհային ու գերշահույթ ստանալու քաղաքականությանը՝ դեմ հանդիման: Մենք կխրախուսենք էներգետիկ դիվերսիֆիկացիան՝ վերականգնվող աղբյուրների ներդրմամբ եւ ԵՄ-ի հետ տնտեսական համագործակցության խորացմամբ, ԱՄՆ-ի հետ համատեղ մեր միջուկային էներգետիկան եւ էներգիայի կուտակման հզորությունները զարգացնելով որպես բացարձակ առաջնահերթություն:

7. Երկրի անվտանգության, զարգացման ու առաջընթացի համար անհրաժեշտ ռեսուրսներ ներգրավելու նպատակով փոխշահավետության հիմքով այլ ուժային կենտրոնների, պետությունների եւ կազմակերպությունների հետ Հայաստանի ինքնիշխանության իրավական եւ արտաքին քաղաքական խոչընդոտներ են հարուցում Եվրասիական տնտեսական միությանը (ԵԱՏՄ) անդամակցությունն ու Հայաստանի անորոշ հեռանկարը եւ զարգացումը խաթարող, ճանապարհին բալաստի վերածված պարտավորությունները: Հայաստանի անդամակցությունը ԵԱՏՄ-ին պետք է դադարեցվի, քանզի այն ոչ միայն տնտեսական զարգացման ու անվտանգության ամրապնդման խոստացված արդյունքները չի բերել ու չի կարող բերել, այլեւ վատթարացրել է Հայաստանի ցուցանիշները բոլոր բնագավառներում՝ մարդու իրավունքներից, ժողովրդավարությունից մինչեւ տնտեսություն, ձեւախեղել կառուցվածքը, սպակոդոնորոշել գործարարներին:

8. Անվտանգության դիվերսիֆիկացված քաղաքականություններ վարելու իրավական սահմանափակումներ են ամրագրվել ՀԱՊԿ շրջանակներում, որոնք կիսել են Հայաստանի ինքնիշխանության իրավունքը հակաօդային պաշտպանության, ցամաքային զորքերի հրամանատարության, սահմանների վերահսկողության, օպերատիվ գործունեության, սպառնալիքների գնահատման եւ դրանց հաղթահարման ուղիների ընտրության եւ այլ հարցերում: Մենք կշարունակենք ՀԱՊԿ-ում Հայաստանի անդամակցության ամբողջական դադարեցման մեր սկզբունքային քաղաքական ուղենիշը:

9. Չավելացնելով մեր անվտանգության մակարդակը՝ ԵԱՏՄ-ն եւ ՀԱՊԿ-ը փաստացի վեր են ածվել Հայաստանի վրա տնտեսական եւ ռազմաքաղաքական ճնշման, ինքնիշխանության սահմանափակումը դե-յուրե ամրագրող, Հայաստանի կենսական շահերին հակառակ որոշումներ պարտադրող հարթակի: Հայաստանի դե-յուրե պարտավորությունները ՀԱՊԿ բազմակողմ, ինչպես նաեւ՝ ՌԴ-ի հետ անվտանգության, պաշտպանության եւ իրավական հարցերով երկկողմ ձեւաչափում ենթակա են ամբողջական խզման: Մենք կկենտրոնանանք Եվրաստվանտյան գործընկերների եւ ասիական ժողովրդավարությունների եւ շահերի, նպատակների եւ արժեքների առումով համախոհ գործընկերների հետ համագործակցության խորացման վրա, ներառյալ ՆԱՏՕ-ի հետ անդամակցության հեռանկարները:

Ազգային շահի վրա խարսխված արտաքին քաղաքականություն

Հայաստանի արտաքին քաղաքականությունը պետք է հիմնված լինի ազգային շահերի պաշտպանության վրա՝ դիվերսիֆիկացնելով գործընկերությունները եւ խուսափելով արտաքին կախվածություններից: Հաշվի առնելով 2025-2026 թթ զարգացումները, այն է՝ խաղաղության գործընթացի առաջընթացը Ադրբեյջանի հետ, ԵՄ-ի հետ նոր ռազմավարական գործընկերային օրակարգը, ՆԱՏՕ-ի հետ խորացող համագործակցությունը եւ ռուսական ազդեցության նվազումը, մենք հանձնառու ենք զարգացնել բազմակողմանի հարաբերություններ՝ առաջնորդվելով իրավահավասարության, փոխշահավետության եւ միջազգային իրավունքի սկզբունքներով:

1. **Եվրոպական ինտեգրումը** Հայաստանի արտաքին քաղաքականության գերակայություն է, իսկ Եվրոպական Միությանը Հայաստանի լիիրավ անդամակցությունը՝ ռազմավարական տեսլական եւ բացարձակ առաջնահերթություն: Նույնատիպ ռազմավարական նպատակ հետապնդող երկրների հետ Հայաստանի սերտ եւ փոխհարգալից համագործակցությունը կենսական անհրաժեշտություն է: Մենք շարունակում ենք՝ 2025-ին մեր գործընկեր կուսակցությունների եւ ՀԿ-ների կողմից նախաձեռնած, շուրջ 60 000 քաղաքացիների կողմից ստորագրությամբ պահանջված եւ ԱԺ-ում ընդունված «ԵՄ անդամակցության օրենքի» եւ Հայաստան-ԵՄ նոր գործընկերային օրակարգի դրույթների կատարման հրամայականով առաջնորդվել, արագացնելով վիզայի ազատականացման գործընթացը, մասնակցելով Եվրոպական քաղաքական համայնքի (EPC) գազաթնաժողովների (այդ թվում՝ 2026-ի Երեւանյան գազաթնաժողովի) պայմանավորվածությունների կատարման աշխատանքներին, Հայաստանն անդամակցության դիմումին նախապատրաստելու ծրագրի կազմմանը 2026 թ ընթացքում եւ շարունակական իրականացմանը, մեր երկրում Եվրոպական ստանդարտների հետեւողական ներդրմանը, իսկ այդ նպատակով՝ գործադիր իշխանության կառուցվածքն ադապտացնելով նպատակի իրագործման բացարձակ առաջնահերթությանը:

2. **Հայաստան-ԱՄՆ** հարաբերությունները 2025-ի հունվարի 14-ին Ռազմավարական գործընկերության մասին խարտիայի, օգոստոսի 8-ին եռակողմ Խաղաղության հռչակագրի, ՀՀ-ԱՄՆ երեք երկկողմ ոլորտային հուշագրերի, 2026-ի հունվարի 13-14-ին «Թրամփի ուղի

հանուն միջազգային խաղաղության եւ բարեկեցության» (TRIPP) նախագծի՝ Վաշինգտոնում ընդունված շրջանակների մասին փաստաթղթերի ստորագրմամբ՝ վերաձվել են Հայաստանի անվտանգության, զարգացման եւ տեխնոլոգիական առաջընթացի, տարածաշրջանային եւ եվրոպական անվտանգության կարելուրագույն գործոնի եւ պետք է կառուցվեն ռազմավարական գործընկերության եւ երկուստեք շահավետ, արժեքահեն համագործակցության սկզբունքների հիման վրա: Հայ-ամերիկյան հարաբերությունների խորացումը, պայմանավորվածությունների համալիր իրագործումը մեզ համար բացարձակ առաջնահերթություն է, ունենալով ներուժ վերաձվելու լիակատար դաշինքի՝ իր բոլոր բաղկացուցիչներով: Մենք հետամուտ կլինենք զարգացնելու ՀՀ-ԱՄՆ պաշտպանական եւ անվտանգային համագործակցությունը, Eagle Partner վարժանքները շարունակելու եւ շրջանակներն ընդլայնելու նպատակով:

3. Վաշինգտոնում 2025թ օգոստոսի 8-ի պատմական նշանակության փաստաթղթերի ստորագրմամբ պայմանավորված անշրջելի փոփոխությունները տարածաշրջանում պահանջում են **Ռուսաստանի** հետ Հայաստանի հարաբերությունների վերաֆորմատավորում եւ վերակառուցում նոր հիմքի վրա՝ առանց կեղծիքի, պատրանքների եւ պարտադրանքի: Հարաբերությունները պետք է կառուցվեն բացառապես իրական փոխշահավետության, իրավահավասարության, շահերը փոխադարձաբար հարգելու ու բավարարելու սկզբունքների հիման վրա, հաշվի առնելով այդ երկրի քաղաքական ռեժիմի բնույթից բխող հնարավոր լարվածությունը՝ հիբրիդ սպառնալիքներ, նեոկայսերապաշտական գաղափարախոսություն, կոշտ ավտորիտարիզմ, ազգային փոքրամասնությունների ճնշումներ, եւ կշարունակենք դիվերսիֆիկացիան՝ չմերժելով երկխոսությունը, բայց բացառելով ՌԴ-ի կայսերական շահերից Արեւմուտքի հետ մերձեցման գործընթացը կախման մեջ դնելը:

4. Ռուսաստանի հետ շահերի, նպատակների եւ արժեքների ընդհանրության՝ ֆիքսված բացակայության պայմաններում մենք պետք է ՀՀ-ՌԴ բազմակողմ եւ երկկողմ իրավապայմանագրային բազան բերենք համապատասխանության՝ այս իրողությանը, ներառյալ՝ ռուսական ռազմական եւ այլ ուժային ներկայության համալիր եւ ամբողջական վերացումը: Կենտրոնական Ասիայի, ինչպես նաեւ այլ տարածաշրջաններում առանցքային երկրների՝ Կանադա, Լատինական Ամերիկայի երկրներ, Չինաստան, Հնդկաստան, Ճապոնիա, Ավստրալիա, Արաբական աշխարհի երկրներ եւ այլն) հետ երկկողմ ձեւաչափով հարաբերությունները չիրացված մեծ ներուժ ունեն, հաշվի առնելով միջազգային ձեւաչափերի եւ միջազգային երաշխիքների ինստիտուտի ճգնաժամը՝ միջազգային հարաբերությունների ներկայիս ահագնացող անորոշության փուլում:

5. **ՆԱՏՕ**-ի հետ հարաբերությունների խորացումն ու ընդլայնումը կարելուր են միջազգային, տարածաշրջանային անվտանգության հարցերում Հայաստանի քաղաքական կշռի եւ անվտանգության մակարդակի բարձրացման, հայկական բանակը ՆԱՏՕ-ի չափանիշներին համապատասխանեցնելու առումներով՝ այդ կառույցին անդամակցությունը որպես հեռահար նպատակ ունենալով: Մենք կհամաձայնեցնենք նոր գործընկերային շրջանակ 2026-ին եւ կշարունակենք մասնակցությունը Կոսովոյում KFOR-ին եւ որպես խաղաղության գործընկեր՝ պատրաստ կլինենք մասնակցությանը այլ միջազգային խաղաղապահ եւ խաղաղարար առաքելություններին:

6. **Իրանը** Հայաստանի համար ոչ միայն հուսալի հարեւան, բարեկամ ու աշխարհի հետ հաղորդակցություն ապահովող երկիր է, այլ նաեւ քաղաքական եւ առևտրատնտեսական առանցքային գործընկեր: Մենք կշարունակենք խորացնել հարաբերությունները՝ կենտրոնանալով տնտեսական ծրագրերի, առաջին հերթին՝ «Հյուսիս-Հարավ» հաղորդակցության ձեւավորման վրա որպես «Խաղաղության խաչմերուկի» կարելուրագույն

բաղկացուցչի եւ սահմանային նոր սարքավորումների տեղադրմամբ 2026-ին, ինչն անխափան եւ հուսալի գործունեություն կապահովի ռուսական ուժերի դուրսբերումից եւ «Թրամփի ուղու» գործարկումից հետո:

7. **Վրաստանն** իր պատմական արժեքի եւ աշխարհագրական, քաղաքակրթական կողմնորոշվածության ու հաղորդակցական ներուժի առումներով Հայաստանը Եվրոպային կապող ռազմավարական նշանակության երկիր է, որի հետ հարաբերությունների ընդլայնումն ու խորացումը ոչ միայն այլընտրանք չունեն, այլև բխում են Հայաստանի կենսական շահերից: Մենք կգարգացնենք 2024-ի Ռազմավարական գործընկերության եւ փոխկապակցվածության խորացման քաղաքականությունը, կենտրոնանալով տարածաշրջանային կապերի, ԱՄՆ-ի եւ ԵՄ-ի հետ համագործակցության, այդ ուղղություններով ընդհանուր օրակարգեր մշակելու եւ իրագործելու վրա:

8. Տարածաշրջանում բոլոր երկրների, այդ թվում՝ **Թուրքիայի ու Ադրբեջանի** հետ հարաբերություններում Հայաստանը պետք է առաջնորդվի խնդիրներն ու վեճերը խաղաղ բանակցություններով, իր ինքնիշխանության եւ ազգային շահերի պաշտպանության ու միջազգային իրավունքին համահունչ լուծելու սկզբունքներով, որոշումներում հիմնվելով ռիսկերի սթափ եւ երկարաժամկետ հաշվարկի վրա: Մենք կշարունակենք 2025-ին նախաստորագրված խաղաղության համաձայնագրի գործընթացը՝ նպատակ ունենալով վերջնականապես ստորագրել այն 2026-ին:

9. Միջազգային հարաբերությունների վերակառուցման, աշխարհակարգի փոփոխության, գլոբալ լոգիստիկ շղթաների վերաձեւման ներկայիս պատմական գործընթացների եւ դրանից բխող ռիսկերի եւ վտանգների պայմաններում Հայաստանի արտաքին քաղաքականությունը պետք է լինի շահախնդիր ու նպատակամետ, միջազգային հարթակներում մասնակցային, նախաձեռնող ու մարտահրավերները կանխարգելող: Մենք կակտիվացնենք Հայաստանի դերը նաեւ ավանդական միջազգային կառույցներում՝ ՄԱԿ-ում, ԵԱՀԿ-ում եւ այլ հարթակներում՝ կենտրոնանալով կլիմայական, կիբերանվտանգության եւ տարածաշրջանային կայունության հարցերի վրա:

Տարածաշրջան եւ անմիջական հարեւանություն. ինքնիշխանություն, խաղաղություն, փոխշահավետություն, փոխկապակցվածություն

Հայաստանի արտաքին քաղաքականության մեջ հարեւանների հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելը, այդ թվում՝ Ադրբեջանի հետ տեւական խաղաղություն հաստատելը միջազգայնորեն ճանաչված սահմաններով տարածքային ամբողջականության սկզբունքի հիման վրա, Թուրքիայի հետ միջպետական հարաբերությունների լիակատար նորմալացումը, Վրաստանի հետ արժեքահեն, խորը ռազմավարական, դաշնակցային հարաբերությունները, Իրանի հետ բարիդրացիական փոխշահավետ հարաբերությունների զարգացումը եւ անվտանգության կայուն ու կանխատեսելի միջավայր ձեւավորելը՝ կենսական կարեւորության ռազմավարական խնդիր է: Հաշվի առնելով 2020-2023 թթ պատերազմները եւ արցախահայության բռնագաղթը, ինչպես նաեւ՝ 2022-2026թթ ռազմավարական շրջադարձը 2025-2026 թթ պատմական զարգացումները (ԱՄՆ-ի միջնորդությամբ Հայաստան-Ադրբեջան խաղաղության երկկողմ համաձայնագրի նախաստորագրումը եւ տնտեսական փոխգործակցության մեկնարկը, TRIPP ուղու նախագիծը, Թուրքիայի հետ վիզային հեշտացումները), մենք հանձնառու ենք կառուցել հորիզոնական, փոխշահավետ

հարաբերություններ՝ հիմնված փոխադարձ հարգանքի, տարածքային ամբողջականության ճանաչման եւ տնտեսական ինտեգրացիայի վրա՝ առանց նախապայմանների եւ տարիֆային ու ոչ տարիֆային խտրականության:

1. Հայաստանի անվտանգության խարիսխը հայկական մարտունակ բանակն է, նրան անվերապահ գորակցող ու վստահող ազատ հասարակությունը, բացառապես պետական շահերը սպասարկող արտաքին քաղաքականությունը, այդ թվում՝ խորհրդարանական ու հանրային ակտիվ դիվանագիտությունը, հայրենական, առաջանցիկ ռազմարդյունաբերական համալիրը, մրցունակ ու զարգացող տնտեսությունը, քաղաքական ու մյուս համակարգերը: Մենք կշարունակենք բանակի արդիականացումը Եվրաստլանտյան չափորոշիչներով՝ հաշվի առնելով 2026-ի անվտանգության մարտահրավերները, եւ կխրախուսենք հասարակության մասնակցությունը խաղաղության գործընթացին:

2. Հարեւանների հետ խաղաղության հաստատումը, փոխկապակցվածության ապահովումը փոխշահավետության հիման վրա՝ խաղաղության հարատևության, ինքնիշխանության ամրապնդման եւ առաջանցիկ զարգացման կարելորագույն գրավականն է: Մենք ոչ միայն կշարունակենք 2025-ի խաղաղության համաձայնագրի իրագործումը՝ նպատակ ունենալով ստորագրել այն 2026-ին, այլեւ կխրախուսենք տնտեսական եւ հաղորդակցային փոխկապակցվածությունը եւ փոխշահավետ համագործակցությունը Ադրբեջանի եւ Թուրքիայի հետ:

3. Խաղաղությունը՝ բարդ, բազմաշերտ ու տեւական գործընթաց է, որը պահանջում է բոլոր կողմերի հասարակությունների նախապատրաստում խաղաղությանը, այլ ոչ թե պատերազմի, ինչպես նաեւ՝ երկրների քաղաքական համակարգերում եւ հանրություններում հանդուրժողականության ինստիտուցիոնալացում: Մենք կխրախուսենք հասարակական երկխոսությունը եւ միջազգային ներգրավվածությունը (ԱՄՆ, ԵՄ, քրիստոնեական եւ մուսուլմանական հոգեւորական շրջանակներ)՝ հաշվի առնելով 2026-ի սահմանային հանգիստը:

4. Խաղաղությունն պետք է ապահովվի ու պահպանվի նախեւառաջ քաղաքական-դիվանագիտական մեթոդներով եւ միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում՝ ուժի պարտադրանքով, երբ նախահարձակ ոտնձգություն է իրականացվում ընդդեմ ինքնիշխանության, տարածքային ամբողջականության եւ սահմանների անձեռնամխելիության, իսկ քաղաքական-դիվանագիտական միջոցներն այլեւս սպառված են: Մենք կշարունակենք սահմանազժման եւ սահմանազատման գործընթացը՝ միջազգային իրավունքի, նորմերի եւ փորձի (ԵԱՀԿ, ՄԱԿ) հիման վրա:

5. Ադրբեջանի հետեւողական սպառազինումը եւ ռազմական բյուջեի ավելացումը թելադրում է նաեւ Հայաստանի կողմից համարժեք զսպման բազմամակարդակ քաղաքականության գործարկումը: Հաշվի առնելով 2025-ի խաղաղության նախաստորագրված համաձայնագիրը, մենք կշարունակենք զսպման եւ հավասարակշռման քաղաքականությունը՝ առաջնորդվելով խելամիտ եւ ասիմետրիկ սպառազինվածությամբ, ռազմաքաղաքական եւ ռազմատեխնիկական համագործակցության գործընկերություններով եւ կխրախուսենք տնտեսական համագործակցությունը (TRIPP ուղի, փոխկապակցվածության ձեւավորում, առեւտրային հոսքեր):

6. Տարածաշրջանում նոր՝ հետխորհրդային ճարտարպետության ավարտն եւ ձեւավորվող հետռուսական իրողությունների պայմաններում Հայաստանի անդամակցության դե-յուրե շարունակությունը ՀՊԿ-ում, ԵԱՏՄ-ում եւ ԱԳՀ-ում, ինչպես նաեւ ՀՀ-ՌԴ երկկողմ իրավապայմանագրային բազայի նշանակալի մասը ոչ միայն ժամանակավրեպ է, այլեւ հիմնովին խաթարում է Հայաստանի տարածաշրջանային եւ միջազգային դիրքերը,

կաշկանդում սուբյեկտայնությունը: Մենք հանձնառու ենք նաև այս համատեքստում առաջնորդվել բացառապես Հայաստանի Հանրապետության շահերով:

7. Թուրքիայի հետ Հայաստանի միջպետական հարաբերությունների նորմալացումը, այդ թվում՝ հայ-թուրքական սահմանի բացումը՝ արտաքին քաղաքականության բացարձակ առաջնահերթություն է, որը ենթակա չէ որևէ նախապայմանի: Մենք կշարունակենք 2026-ի վիզային հեշտացումները (դիվանագիտական անձնագրեր), միջպետական հարաբերություններում հստակ ընթացակարգերի մշակումը, ավիաչվերթների աշխարհագրության ընդլայնումը եւ սահմանի լիակատար բացումն արագացնող քայլերը՝ խրախուսելով հասարակական երկխոսությունը եւ միջազգային ներգրավվածությունը, պահպանելով երկխոսության երկկողմ ձեւաչափը: Մեր տեսլականն է՝ ապահովել Հայաստան-Թուրքիա բարիդրացիական, հորիզոնական, փոխշահավետ, կանոնակարգված, քաղաքակիրթ հարաբերություններ, որոնք ռազմավարական կարեւորություն ունեն թե՛ անվտանգային բարենպաստ միջավայրի, թե՛ տնտեսական զարգացման, թե՛ լիակատար եվրաինտեգրման համատեքստերում: Միեւնույն ժամանակ, գործնական արտաքին քաղաքական օրակարգում անցյալը հաղթահարելուն միտված քայլերը առաջնահերթություններում չներառելով համարում ենք, որ հայ-թուրքական լիակատար հաշտեցումը չի կարող արդյունք տալ պատմական իրողությունների, այդ թվում Հայոց Յեղասպանության անժխտելի փաստի հերքման կամ միջազգային ճանաչումն արգելափակելու դեպքում:

8. Վրաստանն իր աշխարհագրական, քաղաքակրթական կողմնորոշվածության ու հաղորդակցական առումներով Հայաստանը Եվրոպային կապող ռազմավարական նշանակության երկիր է, որի հետ հարաբերությունների ընդլայնումն ու խորացումը այլընտրանք չունեն: Մենք կզարգացնենք 2024-ի ռազմավարական գործընկերությունը՝ կենտրոնանալով տնտեսական կապերի, ռազմական համագործակցության եւ ԵՄ-ի հետ ինտեգրացիայի վրա, ձեւավորելով համատեղ օրակարգեր բոլոր ուղղություններով:

9. Իրանը Հայաստանի համար ոչ միայն հուսալի հարեւան, բարեկամ ու աշխարհի հետ հաղորդակցություն ապահովող երկիր է, այլ նաև քաղաքական եւ առևտրատնտեսական առանցքային գործընկեր: Մենք կշարունակենք \$3 միլիարդ առևտրի նպատակը՝ զարգացնելով «Հյուսիս-Հարավ» միջանցքը, գազի եւ էլեկտրաէներգիայի փոխանակումը, եւ կկնքենք ռազմավարական գործընկերության փաստաթուղթ 2026-ին:

10. Արցախյան ու Հայոց ցեղասպանության խնդրով պայմանավորված Թուրքիայի եւ Ադրբեջանի կողմից Հայաստանի զարգացումը ետ գցելն անվտանգային խնդիր համարելը նշանակալիորեն ճեղքվում է 2025-ից մեկնարկած խաղաղության գործընթացով, եւ մենք կշարունակենք հզորացումը՝ զարգացնելով իրանական եւ վրացական ուղղությունները, ինչպես նաև տարածաշրջանից դուրս գործընկերությունները (ԱՄՆ, ԵՄ), ձգտելով դրանք վերածել դաշինքների:

Պաշտպանություն եւ բանակի արդիականացում, անվտանգության ոլորտ, անվտանգության եւ հատուկ ծառայությունների բարեփոխումներ, Համապարփակ պաշտպանության եւ անվտանգության համակարգի ներդրում

Հայաստանի պաշտպանության եւ անվտանգության համակարգը պետք է արմատապես վերակառուցվի՝ հաշվի առնելով 2020-2023 թթ. պատերազմների դասերը, Արցախի կորուստը եւ

2025-2026 թթ. խաղաղության գործընթացը: Մենք հանձնառու ենք ներդնել Համապարփակ պաշտպանության եւ անվտանգության համակարգ՝ հիմնված միջազգային լավագույն փորձի վրա (գլխավորապես Ֆինլանդիայի, Էստոնիայի եւ Լիտվայի մոդելները), որտեղ ողջ հասարակությունը (քաղաքացիական հատված, բիզնես, կրթություն, առողջապահություն եւ այլն) ներգրավված է պաշտպանության գործում: Այս մոտեցումը կներառի տարածքային պաշտպանության գորքերի կազմավորումը, զինվորական ծառայության տեւողության կրճատումը մինչեւ մեկ տարի (պրոֆեսիոնալացման եւ որակի բարձրացման նպատակով), կիրբերանվտանգության ամրապնդումը, հոգեբանական դիմադրության ծրագրերը եւ քաղաքացիական պատրաստվածությունը: Անվտանգության ոլորտի բարեփոխումները կկենտրոնանան հատուկ ծառայությունների (այդ թվում՝ ԱԱԾ, Սահմանապահ ծառայության եւ հետախուզական ծառայություններ) արդիականացման վրա՝ ապահովելով դրանց անկախությունը, թափանցիկությունը եւ եվրոպական ստանդարտներին համապատասխանեցումը (վեթինգ, միջազգային համագործակցություն, կիրբեր եւ հիբրիդ սպառնալիքների դեմ պայքար): Համակարգը կհիմնվի Եվրաստլանտյան չափորոշիչների վրա՝ ապահովելով ինքնիշխանություն, դիմադրողականություն եւ խաղաղության պահպանում:

1. Մովերի կրճատման եւ տնտեսական աճի հաշվին պաշտպանության ոլորտի ծախսերը ֆիքսել ՀՆԱ-ի 5%-ի ճափով 2026-2031 թթ, այդ թվում՝ աշխատավարձերի ավելացումը, զինվորականության եւ Արցախյան ազատամարտի մասնակիցների համար ընդլայնել սոցիալական արտոնություններն ու կենսական հանրային ծառայությունների մատչելիությունը: Միջոցները կուղղվեն բանակի արդիականացմանը, համապարփակ պաշտպանության համակարգի կառուցմանը եւ հատուկ ծառայությունների բարեփոխումներին՝ ներառյալ վեթինգի գործընթացը:

2. Սահմանային հենակետերն ու ենթակառուցվածքները ապահովել հայրենական արտադրության ու ձեռքբերված նորագույն սարքավորումներով (դիվերսիֆիկացված մատակարարումներ՝ Եվրոպայից, ԱՄՆ-ից եւ Ասիայից), զինվորականի ծառայությունը դարձնել ոչ միայն արժանավայել, այլեւ անվտանգ՝ ներդնելով հոգեբանական աջակցության ծրագրեր եւ առողջապահական ստանդարտներ: Ավելացնել կիրբերանվտանգության բաղադրիչը՝ հիմնվելով Էստոնիայի փորձի վրա (կիրբերապաշտպանության միավորներ եւ քաղաքացիական կիրբերապահեստագոր), եւ ինտեգրել հատուկ ծառայությունների հետ համագործակցությունը հիբրիդ սպառնալիքների դեմ:

3. Բանակի արդիականացման հայեցակարգի կարելորագույն տարրը աստիճանական անցումն է պրոֆեսիոնալ բանակի՝ հաշվի առնելով առանձնահատկություններով, խնդիրներով ու միջավայրով Հայաստանին նման պետությունների փորձը (Էստոնիա, Լիտվա, Ֆինլանդիա): Ծառայության տեւողությունը կկրճատվի մինչեւ մեկ տարի (2026-2028 թթ. փուլային անցում), հաջորդիվ (2029-31 թթ փուլային անցում)՝ ութ ամիս տեւողությամբ, կենտրոնանալով որակյալ եւ հագեցած պատրաստվածության, տեխնոլոգիական հմտությունների եւ մոտիվացիայի բարձրացման վրա, իսկ տարածքային պաշտպանության գորքերը կկազմակերպվեն կամավորական եւ ռեզերվային միավորներով (Էստոնիայի Defence League-ի մոդելով): Կհստակեցվեն ռեզերվի կատեգորիաները եւ ռազմական հավաքների ժամանակացույցերը եւ ծրագրերը, կնախապատրաստվի դրա համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազան:

4. Հայաստանի Չինված ուժերը համապատասխանեցնել ՆԱՏՕ-ի չափանիշներին, շեշտակի բարձրացնել նրա կարողություններն ու մարտունակությունը, այդ թվում՝ միջազգային խաղաղարար առաքելություններին մասնակցության ճանապարհով (օրինակ՝ KFOR-ում) եւ միջազգային գորավարժություններին եւ վարժանքներին առավելագույն մասնակցությամբ: Ուժեղացնել զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը, բանակ-

հասարակություն կապը՝ ներդնելով հասարակական խորհուրդներ եւ թափանցիկ հաշվետվություններ, ինչպես նաեւ համակարգելով հատուկ ծառայությունների հետ (հակահետախուզական եւ հետախուզական աջակցություն):

5. Բացահայտել ՀՀ Չինված ուժերում տեղի ունեցած հանցագործությունները, այդ թվում ոչ մարտական պայմաններում զինվորների եւ սպաների մահվան հանգամանքները, անցկացնել 2020-2023 թթ. պատերազմների ժամանակ տեղ գտած բացթողումների ու սխալների բազմակողմանի, համալիր եւ թափանցիկ հետաքննություն՝ միջազգային փորձագետների ներգրավմամբ (ԵՄ եւ ՆԱՏՕ գործընկերներ): Այս գործընթացը կտարածվի նաեւ հատուկ ծառայությունների վրա՝ ապահովելով դրանց անկախությունը եւ պատասխանատվությունը:

6. Վերանայել եւ առավելագույնս վերահսկելի դարձնել պաշտպանության եւ անվտանգության ոլորտում գնումների գործընթացը՝ բացառելով յուրացումները, չարաշահումները եւ կոռուպցիոն գործարքները: Ներդնել էլեկտրոնային գնումների համակարգ՝ ԵՄ ստանդարտներին համապատասխան, եւ միջազգային աուդիտ՝ ընդգրկելով հատուկ ծառայությունների ռեսուրսները:

7. Վերանայել սպառազինությունների ձեռքբերման հայեցակարգը՝ շեշտը դնելով ռազմավարական զինատեսակների ձեռքբերման կամ Հայաստանում համատեղ արտադրության վրա, այդ թվում՝ ոչ նախկին ՀԱՊԿ անդամ երկրներից (Եվրոպա, ԱՄՆ, Հնդկաստան): Դիվերսիֆիկացնել մատակարարումները՝ խուսափելով մոնոպոլիաներից, եւ ինտեգրել հատուկ ծառայությունների հետախուզական տվյալները գնումների որոշումներում:

8. Ներդնել համապարփակ պաշտպանության եւ անվտանգության համակարգ՝ հիմնված Ֆինլանդիայի (whole-of-society մոտեցում՝ քաղաքացիական ներգրավվածություն, հոգեբանական դիմադրություն, ստորգետնյա ապաստարաններ), Էստոնիայի (կիրերպաշտպանություն, ռեզերվային ուժեր) եւ Լիտվայի (total defense, ՆԱՏՕ ինտեգրացիա) փորձի վրա: Այն կներառի ողջ հասարակության պատրաստվածություն, կիրերանվտանգության կենտրոններ եւ հիբրիդ սպառնալիքների դեմ պայքար՝ համակարգելով հատուկ ծառայությունների հետ:

9. Շարունակել Տարածքային պաշտպանության գորքերի կազմավորումը՝ հիմնված կամավորական եւ ռեզերվային միավորների վրա (Էստոնիայի Defence League-ի մոդելով), որոնք կպատրաստվեն տեղական մակարդակում արագ եւ համապարփակ արձագանքի համար: Կիրախուսենք քաղաքացիական մասնակցությունը՝ ստեղծելով տարածքային շտաբներ եւ վարժանքներ, ինչպես նաեւ ինտեգրելով հատուկ ծառայությունների հետախուզական աջակցությունը: Առանցքային կարելություն ենք տալիս անհատական զենքին տիրապետելու, այն պահպանելու, կրելու եւ հմտորեն կիրառելու մշակույթին, զինված հասարակության տեսլականին համահունչ:

10. Չարկ տալ ռազմարդյունաբերական համալիրի զարգացմանը՝ այդ թվում առաջատար երկրների հետ համատեղ նախագծեր կյանքի կոչելով (օրինակ՝ ԱՄՆ-ի հետ էլեկտրոնային պատերազմի համակարգեր, Եվրոպայի հետ անօդաչու թռչող սարքեր): Կիրախուսենք նորարարությունները եւ տեխնոլոգիական ինտեգրացիան՝ ներառյալ հատուկ ծառայությունների տեխնոլոգիական արդիականացումը, Հայաստանի ռազմարդյունաբերության արտահանման ներուժի ընդլայնումը:

11. Անվտանգության ոլորտի եւ հատուկ ծառայությունների բարեփոխումներ՝ արմատապես վերակառուցել ԱԱԾ-ը, Սահմանապահ ծառայությունը եւ հետախուզական ծառայությունները՝ ապահովելով դրանց անկախությունը քաղաքական իշխանությունից (վեթինգի գործընթաց,

միջազգային աուդիտ), թափանցիկությունը եւ եվրոպական ստանդարտներին համապատասխանեցումը (ԵՄ, ՆԱՏՕ): Կենտրոնանալ կիրերանվտանգության, հիբրիդ սպառնալիքների եւ հետախուզական համագործակցության վրա՝ ներդնելով ժամանակակից տեխնոլոգիաներ եւ միջազգային գործընկերություններ համախոհ եւ դաշնակից երկրների հետ:

Օրինականության եւ իրավունքի գերակայության հաստատում եւ դատաիրավական համակարգի բարեփոխումներ

Հայաստանի դատաիրավական համակարգը պետք է արմատապես բարեփոխվի՝ ապահովելով օրենքի գերակայությունը, իշխանության ճյուղերի հավասարակշռումը եւ քաղաքացիների իրավունքների պաշտպանությունը, ինչը նաեւ երկարաժամկետ մեծածավալ ներդրումների եւ բարենպաստ ներդրումային միջավայրի գրավականն է: Հաշվի առնելով 2025-2026 թթ. զարգացումները (ՄԻԵԴ-ի 2025թ սեպտեմբերի 18-ի դատավճիռը 2008-ի մարտի 1-ի դեպքերի վերաբերյալ, դատաիրավական բարեփոխումների շարունակումը եւ ԵՄ-ի հետ ինտեգրացիայի գործընթացը), մենք հանձնառու ենք ստեղծել անկախ, թափանցիկ եւ արդյունավետ համակարգ՝ հիմնված եվրոպական ստանդարտների վրա, ներառյալ վեթինգի կատարելագործումը, քաղաքական լուստրացիան եւ հին հանցագործությունների հետաքննությունը՝ որպես ժողովրդավարության երաշխիք:

1. Նոր Սահմանադրությունը պետք է երաշխավորի խորհրդարանական կառավարման համակարգին լիակատար անցման օրենսդրական հիմքերի ապահովումը, որտեղ առանցքային է իշխանության ճյուղերի ճշգրիտ տարանջատումը, պատասխանատվության եւ հաշվետվողականության հստակեցումը: Մենք կշարունակենք Սահմանադրության բարեփոխումները՝ ամրապնդելով խորհրդարանական վերահսկողությունը դատաիրավական համակարգի վրա եւ ներդնելով քաղաքացիական մասնակցության մեխանիզմներ (օրինակ՝ երդվյալ ատենակալներ դատարաններում, դատավորների ընտրություններ), հստակեցնելով բարեւարքության չափանիշները:

2. Անհրաժեշտ է կայացնել իրապես անկախ դատաիրավական համակարգ՝ բացառելով «վերեւներից թելադրված» արդարադատությունը, ապահովել գործնականում օրենքի առջեւ բոլորի հավասարության եւ իրավունքի գերակայության կիրառելիության արդյունավետ մեխանիզմներ: Մենք կկատարելագործենք վեթինգի գործընթացը՝ ընդգրկելով բոլոր դատավորներին եւ դատախազներին, հիմնվելով ԵՄ-ի խորհուրդների վրա, եւ կներդնենք էլեկտրոնային դատավարության համակարգ՝ թափանցիկության բարձրացման համար:

3. Հիմնովին բարեփոխել հատկապես քրեական արդարադատության համակարգը, հետեւողական պայքար մղել հանցավորության, քրեական ենթամշակույթի դեմ, բացառելով խոշտանգումները, խտրական եւ վատ վերաբերմունքը: Մենք կներդնենք անկախ հետաքննչական մեխանիզմներ (օրինակ՝ հատուկ հանձնաժողով ՄԻԵԴ-ի վճիռների կատարման համար) եւ կխրախուսենք միջազգային համագործակցությունը (ԵՄ, ՄԱԿ)՝ խոշտանգումների կանխարգելման համար:

4. Մեր առաջնահերթություններից է՝ բացահայտել 1999 թ. հոկտեմբերի 27-ի եւ 2008 թ. մարտի 1-ի ոճրագործությունները, տալով դրանց լիակատար քրեա-իրավական գնահատական, պատասխանատվության ենթարկել դրանց պատվիրատուներին, կազմակերպիչներին եւ իրականացնողներին: Մենք կօգտագործենք ՄԻԵԴ-ի 2025թ սեպտեմբերի 18-ի դատավճիռը (2008-ի մարտի 1-ի դեպքերի վերաբերյալ) որպես իրավական հիմք քաղաքական լուստրացիայի համար՝ վճռով հաստատված անհատներին, ուժերին և

նրանց սպասարկած պաշտոնյաներին՝ ընտրական և պետական պաշտոններ զարդեցնելու արգելք սահմանելով, բացառելով քաղաքական հետապնդումները եւ ապահովելով անկախ հետաքննչական հանձնաժողովի ստեղծումը միջազգային փորձագետների ներգրավմամբ:

5. Մենք հետամուտ կլինենք տնտեսական խոշոր հանցագործությունների ու յուրացումների անաչառ եւ թափանցիկ հետաքննությանը: Մենք կստեղծենք հատուկ անկախ մարմին (ԵՄ-ի աջակցությամբ)՝ կոռուպցիոն գործերի հետաքննության նկատմամբ հսկողության եւ գործընթացի թափանցիկության եւ վստահելիության ապահովման համար, եւ կներդնենք ակտիվների վերադարձի մեխանիզմներ՝ հիմնվելով միջազգային ստանդարտների վրա, սերտորեն համագործակցելով գործընկեր պետությունների:

6. Մենք կուժեղացնենք Հայաստանի Մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը: Մենք կընդլայնենք նրա լիազորությունները՝ ներառյալ դատաիրավական գործերում ուղղակի միջամտությունը, եւ կապահովենք անկախ ֆինանսավորումը՝ ԵՄ-ի խորհուրդների համաձայն:

7. Մենք կվերանայենք քաղաքական դրդապատճառներով դատապարտված անձանց գործերը, կներդնենք յուրստրաջիայի մեխանիզմները՝ հիմնվելով ՄԻԵԳ-ի 2025թ սեպտեմբերի 18-ի դատավճռի վրա, եւ կստեղծենք հատուկ հանձնաժողով՝ քաղաքական հետապնդումների գործերի վերանայման համար: Պետությունը պետք է քաղաքական եւ բարոյական պատասխանատվություն ստանձնի բոլոր քաղաքական դրդապատճառներով դատապարտված անձանց նկատմամբ:

8. Մենք առաջնահերթ ուշադրություն կդարձնենք իրավաբանական կրթությանը Հայաստանում, դրա համապատասխանեցմանը եվրոպական ստանդարտներին, տոտալիտար եւ ավտորիտար անցյալի իներցիայի հաղթահարմանը, ընդարձակ միջազգային համագործակցություն կծավալենք երկրում ամենաառաջատար իրավաբանական կադրերի պատրաստման պայմաններ ապահովելու համար:

9. Մենք կապահովենք Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԳ) կողմից կայացված վճիռների աներկբա եւ ժամանակին կատարումը, ինչն էապես կզսպի դատարաններին ակնհայտ անարդար վճիռներ կայացնելիս: Մենք կստեղծենք մոնիթորինգի համակարգ՝ ՄԻԵԳ վճիռների կատարման համար, եւ կհամագործակցենք Եվրոպայի խորհրդի հետ՝ կատարման ցուցանիշները բարձրացնելու, արդյունքները հրապարակայնացնելու համար:

10. Մենք արդարացի ենք համարում, որ ՄԻԵԳ-ի վճիռներով նախատեսված քաղաքացիներին փոխհատուցման բեռը պետության փոխարեն դրվի անարդար վճիռ կայացրած դատավորի վրա: Մենք կօրինականացնենք այս մեխանիզմը՝ որպես վեթինգի մաս, եւ կապահովենք դատավորների անձնական պատասխանատվությունը:

11. Մենք կշարունակենք Ներքին գործերի նախարարության (ՆԳՆ) եւ Ոստիկանության բարեփոխումները՝ ամրապնդելով Ոստիկանական գվարդիայի դերը եւ բացառելով որեւէ միջամտություն քաղաքական ու քաղաքացիական իրավունքների իրացման գործընթացներին: Մենք կներդնենք ոստիկանության հետագա կատարելագործումներ՝ հիմնված ԵՄ-ի ստանդարտների վրա, ներառյալ հանրային վերահսկողության խորհուրդներ, միջազգային վերապատրաստումներ եւ թափանցիկ հաշվետվություններ՝ ապահովելով համակարգի արդյունավետությունն ու քաղաքացիների վստահությունը:

Աշխարհիկ պետություն, ազատ եկեղեցի, խղճի ազատություն և ազգային պատասխանատվություն

«Հանուն Հանրապետության» կուսակցությունը համոզված է, որ պետության, եկեղեցու և հավատքի ոլորտի առողջ կարգավորումը ազգային կայունության, հասարակական համերաշխության և ինքնիշխանության կարեւոր բաղադրիչ է:

Հայաստանի Հանրապետությունը աշխարհիկ պետություն է:

Սա նշանակում է, որ պետությունը չի նույնանում որեւէ կրոնի հետ, չի ղեկավարում եկեղեցիները և չի թույլ տալիս, որ որեւէ կրոնական կառույց իրականացնի պետական իշխանություն:

Միեւնույն ժամանակ աշխարհիկությունը չի նշանակում հակակրոնական մոտեցում. այն նշանակում է **հավատի ազատություն, հավասարություն և պաշտպանվածություն բոլորի համար:**

1. Պետություն և եկեղեցի. սահմանադրական հիմք

Հայաստանի Հանրապետությունում՝

- պետությունը ապահովում է խղճի և դավանանքի ազատությունը,
- եկեղեցիներն ու կրոնական կազմակերպությունները գործում են օրենքի շրջանակում,
- որեւէ կրոնական կառույց չի կարող ունենալ քաղաքական կամ վարչական գերիշխող դեր:

Այս սկզբունքը պաշտպանում է եւ՛ պետության ինքնիշխանությունը, եւ՛ հավատքի ազատությունը:

2. Հայ Առաքելական Եկեղեցին՝ պատմական առաքելություն և ազգային ժառանգություն

Հայ Առաքելական Եկեղեցի-ն բացառիկ և անփոխարինելի դեր է ունեցել հայ ժողովրդի պատմության մեջ՝

- Քրիստոնեական հավատքի ընդունման և պահպանման,
- ազգային ինքնության, լեզվի և մշակույթի պահպանման,
- պետականության բացակայության դարաշրջաններում ազգային ինքնակազմակերպման գործում:

Այս պատմական դերակատարությունը խորապես հարգելի է և հանդիսանում է Հայաստանի ազգային ժառանգության հիմնասյուներից մեկը:

3. Խղճի ազատություն և կրոնների հավասարություն

Հայաստանի Հանրապետությունում յուրաքանչյուր մարդ ունի՝

- հավատալու կամ չհավատալու իրավունք,
- ցանկացած կրոն դավանելու կամ որեւէ կրոն չդավանելու ազատություն,
- իր համոզմունքները արտահայտելու իրավունք՝ օրենքի շրջանակում:

Պետությունը պարտավոր է ապահովել բոլոր կրոնական կազմակերպությունների եւ հավատացյալների **իրավական հավասարությունը**, բացառելով խտրականությունը, ճնշումը կամ արտոնյալ վերաբերմունքը:

Այլ կրոնները եւ կրոնական համայնքները Հայաստանի հասարակության օրինական մաս են եւ իրավունք ունեն խաղաղ, ազատ եւ անվտանգ գործունեության:

4. Եկեղեցին եւ քաղաքականությունը. հստակ սահմաններ

Կուսակցությունը անընդունելի է համարում՝

- եկեղեցական կառույցների ներգրավումը ներքաղաքական պայքարում,
- հոգեւոր հեղինակության օգտագործումը քաղաքական մանիպուլացիայի համար,
- կրոնական հարթակների վերածումը արտաքին ազդեցության գործիքների:

Սա վերաբերում է ոչ միայն Հայ Առաքելական Եկեղեցուն, այլ **բոլոր կրոնական կազմակերպություններին**:

Կրոնը չի կարող լինել քաղաքական ազդեցության կամ աշխարհաքաղաքական օրակարգերի առաջնղման միջոց:

5. Ազգային եկեղեցի՝ ազգային պատասխանատվությամբ

Հայ Առաքելական Եկեղեցու ազգային դերը ենթադրում է նաեւ պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության, նրա քաղաքացիների եւ ապագայի հանդեպ:

Անհանդուրժելի է, երբ որեւէ կրոնական կառույց կամ դրա շուրջ ձեւավորվող խմբեր՝

- սպասարկում են օտար պետությունների կամ արտաքին ուժերի շահեր,
- խաթարում են պետական ինստիտուտների հեղինակությունը,
- նպաստում են հասարակության բեւեռացմանը եւ ներքին ապակայունացմանը:

Պետությունը պարտավոր է նման ռիսկերին հակազդել բացառապես իրավական եւ սահմանադրական միջոցներով:

6. Օրինականություն եւ հաշվետվողականություն

Բոլոր կրոնական կազմակերպությունները, անկախ պատմական դերակատարումից կամ հետեւորդների թվից, պետք է՝

- գործեն օրենքի շրջանակում,
- ենթարկվեն ֆինանսական եւ գույքային թափանցիկության պահանջներին՝ օրենքով սահմանված կարգով,
- չունենան անձեռնմխելիություն օրենքի առաջ:

Օրենքը հավասար է բոլորի համար՝ հավատացյալների, հոգեւորականների եւ աշխարհիկ անձանց:

7. Եկեղեցին, հավատքը եւ հասարակական համերաշխությունը

Կրոնական կառույցները կարող են եւ պետք է նպաստեն՝

- բարոյական արժեքների պահպանմանը,
- սոցիալական համերաշխությանը,
- հասարակական հաշտեցմանը եւ վստահության վերականգնմանը:

Սակայն դա հնարավոր է միայն այն դեպքում, երբ նրանք մնում են քաղաքական չեզոքության, ազգային պատասխանատվության եւ օրենքի գերակայության դիրքում:

«Հանուն Հանրապետության» կուսակցության համար ուժեղ պետությունը նշանակում է՝ աշխարհիկ իշխանություն, ազատ եւ արժանապատիվ եկեղեցի, խղճի ազատություն յուրաքանչյուր քաղաքացու համար: Հայ Առաքելական Եկեղեցին՝ որպես պատմական եւ հոգեւոր ժառանգություն: Այլ կրոնները՝ որպես ազատ եւ պաշտպանված համայնքներ: Պետությունը՝ որպես իրավունքի, հավասարության եւ հանրային շահի երաշխավոր: Այս հավասարակշռությունն է ինքնիշխան, կայացած եւ համերաշխ Հայաստանի հիմքը:

Չրո հանդուրժողականությունն եւ անզիջում պայքար կոռուպցիայի, հանցավորության եւ քրեական ենթամշակույթի դեմ

«Հանուն Հանրապետության» կուսակցությունը համոզված է, որ կոռուպցիան, կազմակերպված հանցավորությունը եւ քրեական ենթամշակույթը ոչ թե առանձին խնդիրներ են, այլ **պետականության քայքայման համակարգային գործոններ**: Դրանց գոյությունը անհամատեղելի է իրավական պետության, մրցունակ տնտեսության եւ ազգային անվտանգության հետ:

Մեր մոտեցումը հստակ է. **զրո հանդուրժողականություն, անխուսափելի պատասխանատվություն եւ պետության ուժի հաստատում եւ կիրառում՝ օրենքի գերակայության լիակատար դրսեւորմամբ**:

1. Կոռուպցիայի համակարգային բնույթի վերացում

Կոռուպցիան Հայաստանում ունեցել է **ինստիտուցիոնալ եւ համակարգային բնույթ**, որը սնուցվել է իշխանության, բիզնեսի եւ հանցավոր կապերի միահյուսմամբ, ձեւավորելով սովետական ժառանգության հետ մեկտեղ նաեւ հոռի ավանդույթներ: Այն ամբողջությամբ հաղթահարված չէ, եւ վերջին մի քանի տարվա ընթացքում կոռուպցիայի ընկալման համաթվի (ըստ Transparency International-ի սանդղակի) բարելավում տեղի չի ունենում:

Պետական քաղաքականության առաջնահերթություններն են՝

պետական եւ համայնքային կառավարման **լիակատար թափանցիկություն եւ հաշվետվողականություն**,

- թվայնացված կառավարման համակարգերի համընդհանուր ներդրում՝ մարդկային գործոնի նվազեցման նպատակով,
- համայնքների ֆինանսական ինքնուրույնության բարձրացում՝ վերահսկելի եւ հաշվետու մեխանիզմներով,
- հաշվի առնելով ձեւավորվող փոխկապակցվածությունը Հայաստանի եւ հարեւանների միջեւ՝ անհրաժեշտությունը էսպես ավելացնելու հատուկ ծառայությունների եւ

հակակոռուպցիոն մարմինների կարողությունները՝ հավելյալ կոռուպցիոն ռիսկերը կառավարելու նպատակով, նկատի ունենալով հարեւան երկրներում կոռուպցիայի բարձր մակարդակը:

2. Պատժելիության անխուսափելիություն՝ որպես կանխարգելում

Կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության հիմնական պայմանը **պատժի անխուսափելիությունն է**, ոչ թե դրա խստությունը: Մենք կարելուքում ենք.

- կոռուպցիոն եւ տնտեսական ծանր հանցագործությունների քննության հնստիտուցիոնալ ամրապնդումը,
- քաղաքական ազդեցությունից անկախ դատախազական եւ քննչական համակարգը, հակակոռուպցիոն մարմինների ամրապնդումը,
- ապօրինի ծագում ունեցող գույքի հայտնաբերման, բռնագանձման եւ հանրային վերադարձի գործուն մեխանիզմները եւ դրանց շարունակական կատարելագործումը,
- բաւարարության չափորոշիչների հստակեցումը եւ արդյունավետ կիրառումը:

Ոչ մի պաշտոն, կապ կամ անցյալ ծառայություն չի կարող լինել անձեռնմխելիության հիմք:

3. Քրեական ենթամշակույթի եւ դրա սոցիալ-մշակութային արմատների իսպառ վերացում

Քրեական ենթամշակույթը պետության ներսում **այլընտրանքային «իշխանություն» է**, որը խարխուլում է օրենքի գերակայությունը: Պետությունը պարտավոր է

- բացառել քրեական հեղինակությունների ազդեցությունը քաղաքական, տնտեսական եւ հասարակական գործընթացների վրա,
- խստորեն պայքարել քրեական վարքագծի հանրային լեգիտիմացման դեմ,
- կրթական, մշակութային եւ տեղեկատվական քաղաքականությամբ ձեւավորել օրինականության եւ քաղաքացիական արժանապատվության մշակույթ:

4. Մենաշնորհների եւ օլիգոպոլիաների վերջնական վերացում

Կոռուպցիայի հիմնական սնուցողը **տնտեսական մենաշնորհն ու իշխանության եւ բիզնեսի սերտաճումն է**: Մենք հանդես ենք գալիս.

- տնտեսական եւ քաղաքական իշխանության կտրուկ տարանջատման օգտին,
- մրցակցության պաշտպանության օրենսդրության խստացման եւ իրական կիրառման օգտին,
- պետական հովանավորչության եւ ընտրովի մոտեցումների բացառման օգտին:

Օրենքի խախտմամբ ձեռքբերված գույքը պետք է վերադարձվի հանրությանը:

5. Օֆշորային եւ փակ կառույցների բացառում պետական համակարգից

Պետական միջոցների եւ բնական ռեսուրսների կառավարումը պետք է լինի **բաց, հաշվետու եւ թափանցիկ**: Մենք կարելուքում ենք.

- օֆշորային կամ սեփականության թափանցիկություն չունեցող ընկերությունների բացառումը՝ պետական գնումներից, սեփականաշնորհումներից եւ բնական ռեսուրսների շահագործումից,

- սեփականության իրական շահառուների բացահայտման պարտադիր համակարգ՝ փողերի լվացման ռիսկերը նվազագույնի հասցնելու նպատակով:

6. Ստվերային տնտեսության կտրուկ կրճատում

Ստվերային տնտեսությունը ոչ միայն տնտեսական, այլև **քաղաքական վտանգ է**, քանի որ այն սնուցում է կոռուպցիան եւ հանցավորությունը: Պետական քաղաքականության նպատակը պետք է լինի.

- ստվերի կրճատում ոչ թե ռեպրեսիվ, այլ՝ պարզ եւ արդար հարկային համակարգով, կանխատեսելի կանոններով, բիզնեսի նկատմամբ վստահության մթնոլորտում եւ պետություն-բիզնես գործընկերության հաստատմամբ,
- ստվերից դուրս բերված միջոցների ուղղում՝ անվտանգության, առողջապահության եւ սոցիալական ոլորտների կայուն զարգացմանը:

«Հանուն Հանրապետության» կուսակցության համար կոռուպցիայի եւ քրեական ենթամշակույթի դեմ պայքարը **քարոզչական կարգախոս չէ**, այլ պետական կառավարման հիմք: Ուժեղ պետությունը այն պետությունն է, որտեղ՝ օրենքը բարձր է ամեն ինչից, հանցագործությունը շահավետ չէ, կոռուպցիան համընդհանուր հանրային պարսավանքի առարկա է եւ հավասարեցված է պետական դավաճանությանը, իսկ իշխանությունը ծառայում է հանրությանը, ոչ թե խմբերի՝ ի հաշիվ հանրության:

Մրցունակ տնտեսություն. տնտեսական քաղաքականության առաջնահերթություններ

«Հանուն Հանրապետության» կուսակցությունը մրցունակ տնտեսությունը դիտարկում է որպես Հայաստանի քաղաքական անկախության, ազգային անվտանգության եւ եվրոպական ապագայի հիմնարար հենասյուն: Տնտեսական քաղաքականությունը մեզ համար տեխնիկական գործիքների հավաքածու չէ, այլ պետական ռազմավարություն՝ ուղղված երկարաժամկետ զարգացման, հասարակական բարեկեցության եւ ինքնիշխանության ամրապնդմանը:

Մրցունակ տնտեսությունը անհնար է առանց իրավական հավասար դաշտի, սեփականության պաշտպանության, ազատ մրցակցության եւ պետության չեզոքության տնտեսական գործընթացների նկատմամբ: Կոռուպցիան, ստվերային տնտեսությունը, մենաշնորհները եւ իշխանության ու բիզնեսի սերտաճումը ոչ միայն խոչընդոտում են տնտեսական աճը, այլ նաեւ քայքայում են պետությունը:

1. ԵՄ-ին ինտեգրվող տնտեսական համակարգ

Հայաստանի տնտեսական զարգացման առանցքում մենք դնում ենք Եվրոպական միությանն անդամակցելու քաղաքական կուրսը, ինչը ենթադրում է տնտեսական համակարգի ինստիտուցիոնալ վերափոխում՝ եվրոպական կանոններին, շուկաներին եւ ստանդարտներին համապատասխան:

Պետական քաղաքականության առաջնահերթություններն են՝

